ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-17/1

ք.Երևան 20 հուլիսի 2017թ.

ՀՀ ԿԱԱԳ կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	ք. Երևան, Մյասնիկյան 22/4
հ/հ 900013220026	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հ/հ 22008333501[illegible]
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 084[illegible]
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Վ. Հասրաթյան	Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

4.8

Հավելված N 1
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն /ԳԱԶ մակնիշի ա/մ/	ՀՀ դրամ	120000	1	Մյասնիկյան 22/4	15.12.2017թ.
2	50111130/4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն/ ՎԱԶ մակնիշի առջևի տանող ա/մ/	ՀՀ դրամ	120000	1	Մյասնիկյան 22/4	15.12.2017թ.
3	50111130/4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն/ ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ/	ՀՀ դրամ	120000	1	Մյասնիկյան 22/4	15.12.2017թ.
4	50111130/4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն /4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա)	ՀՀ դրամ	90000	1	Մյասնիկյան 22/4	15.12.2017թ.
5	50111130/4	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն/ Արտասահմանյան (ոչ ռուսական) ավտոմեքենաներ/	ՀՀ դրամ	250000	1	Մյասնիկյան 22/4	15.12.2017թ.

	ՏՍ-1*, ՏՍ-2** ծառայություններիՏՍ-2 ընթացքումօգտագործվող Պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	չափաբաժին 1	չափաբաժին 2	չափաբաժին 3	չափաբաժին 4	չափաբաժին 5
		ԳԱԶ մակնիշի ա/մ	ՎԱԶ մակնիշի առջևի տանող ա/մ	ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա)	Արտասահմանյան (ոչ ռուսական) ավտոմեքենաներ
1	Բռնկման համակարգի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
2	Սառեցման համակարգի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
3	Յուղման համակարգի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
4	Արտացման համակարգի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
5	Կցորդման համակարգի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000

7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում					
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
13	ABS համակարգի ստուգում					
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
16	Թափքի վիճակի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում					
18	Շարժիչի հանում և տեղադրում	35,000	35,000	35,000	35,000	78,000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	100	100	-	-	-
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	-	-	-	-
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-	-	-	-	-
22	Շարժիչի վերանորոգում	65,000	65,000	65,000	65,000	155,000
23	Նույնը DOHC դեպքում	100	100	-	-	-
24	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	15,000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	15,000
27	Նույնը աջի համար (V6)	-	-	-	-	-
28	Նույնը ձախի համար (V6)	-	-	-	-	-
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	28,000	28,000	28,000	28,000	62,000
30	Նույնը աջի համար (V6)	-	-	-	-	-
31	Նույնը ձախի համար (V6)	-	-	-	-	-
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	45,000	45,000	45,000	45,000	65,000
34	Փականի խցուկի փոխարինում	4,500	4,500	4,500	4,500	4,500
35	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	22,000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	-	-	-	-	-
38	Նույնը V6-ի աջի դեպքում	-	-	-	-	-
39	Նույնը DOHC դեպքում	1,000	1,000	1,000	1,000	1,000
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	-	2,000	-	-	-
41	Հրիչների փոխարինում SOHC	8,900	8,900	8,900	8,900	20,000
42	Նույնը DOHC դեպքում	100	100	100	100	100
43	Ատամնավոր փոկի փոխարինում	100	10,000	100	100	65,000
44	Նույնը DOHC դեպքում	100	100	100	100	100
45	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	26,000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	-	-	-	-
48	Նույնը DOHC դեպքում	100	100	-	-	-
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	-	-	-	-
50	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	-	-	-	-	-
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-	-	-	-	-

54	Մխոցային օղակների փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	70,000
55	Նույնը DOHC դեպքում	100	100	100	100	100
56	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
57	Թափանիվի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000
59	Յուղի պոմպի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
60	Նույնը DOHC դեպքում	100	100	-	-	-
61	Նույնը V6-ի դեպքում	-	-	-	-	-
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	25,000	25,000	25,000	25,000	85,000
63	Բռնկման կարգավորում	1,000	1,000	1,000	1,000	1,000
64	CO կարգավորում	1,000	1,000	1,000	1,000	1,000
65	Խարնարակի հանում և տեղադրում	1,000	2,000	2,000	1,000	100
66	Խարնարակի վերանորոգում	1,000	3,000	3,000	1,000	100
67	Օդի զտիչի փոխարինում	500	500	500	500	1,000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	25,000	25,000	25,000	25,000	25,000
70	Բենզամղիչի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
73	Տրամլյորի հանում և տեղադրում	2,000	2,000	2,000	2,000	2,000
74	Տրամլյորի վերանորոգում	1,000	1,000	1,000	1,000	1,000
3. Սառեցման և արտածման համակարգ						
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
76	Հովհարի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	100	100	100	100
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	-	-	-	-	-
80	Ռադիատորի վերանորոգում	9,000	9,000	9,000	9,000	3,000
81	Թերմոստատի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	12,000
82	Ջրի պոմպի փոխարինում	11,000	11,000	11,000	11,000	25,600
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	-	-	-	-	-
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	-	-	-	-
85	Ջրի պոմպի վերանորոգում	100	100	100	100	100
86	Նույնը DOHC դեպքում	100	100	100	100	100
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	100	100	100	100
88	Ընդարձակող բաքի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
89	Խլարարի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	10,000
90	Նույնը DOHC դեպքում	100	100	100	100	100
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,000	2,000	2,000	2,000	2,000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	15,600
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	2,000	2,000	2,000	2,000	2,000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	25,000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1,000	1,000	1,000	1,000	1,000
96	Կցորդման ձոպանի հանում և տեղադրում	100	5,000	-	-	-
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	25,000	25,000	25,000	25,000	60,000
98	ՓՏ-ի վերանորոգում	40,000	40,000	40,000	40,000	65,000

99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	6,500	6,500	6,500	6,500	10,000
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
101	Կազքաչափի շարժաբերի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	4,000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	-	-	-	-	-
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	-	-	-	-	-
104	Նույնը V6-ի համար	-	-	-	-	-
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	-	-	-	-	-
106	Նույնը V6-ի համար	-	-	-	-	-
107	ԱՓՏ-ի վերանորոգում	-	-	-	-	-
108	Նույնը V6-ի համար	-	-	-	-	-
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	-	-	-	-	-
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	-	-	-	7,000	1,000
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	-	-	-	35,600	1,000
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	-	-	-	5,000	1,000
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	8,000	8,000	8,000	8,000	8,000
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
116	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
	6. Առջևի և հետևի կամրջակներ					
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	25,000	25,000	25,000	25,000	25,000
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	45,000	45,000	45,000	45,000	45,000
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	25,000	25,000	25,000	25,000	25,000
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	6,000	6,000	6,000	6,000	6,000
121	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
	7. Կախոց					
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	45,000	45,000	45,000	45,000	75,000
123	Տրավերսի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
124	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	-	5,000	-	5,000	6,000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	6,500	6,500	6,500	6,500	10,000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	1,000	100	10,000	1,000	1,000
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	-	4,000	-	100	6,000
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	-	-	-	-	-
129	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	-	3,000	-	3,000	6,000
130	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	-	3,000	-	3,000	6,000
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,500	5,500	5,500	5,500	5,500
132	Ձսպանակի հանում և տեղադրում	6,500	6,500	6,500	6,500	6,500
133	Ձսպակի հանում և տեղադրում	5,500	-	-	3,000	1,000
134	Ձսպակի վռանների փոխարինում	8,000	-	-	5,000	1,000
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	5,000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5,500	5,500	5,500	5,500	5,000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	4,000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	5,000

139	Միջին ձգանի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	100
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	100
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	9,000	9,000	9,000	9,000	100
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	5,000
143	Գնդե հոդակապերի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
144	Ծայրակալների հանում և տեղադրում	4,500	4,500	4,500	4,500	6,000
145	Աջևի կայունարարի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	7,000
146	Աջևի կայունարարի վռանների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	10,000
147	Աջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	3,000
148	Հետևի զսպանակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	7,000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	7,000
150	Հետևի ծգածողի հանում և տեղադրում	1,000	1,000	1,000	1,000	12,000
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	100	100	100	100	12,000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1,000	1,000	1,000	1,000	5,000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	-	500	-	-	-
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	-	500	-	-	-
155	Անվաբացքի կարագավորում	-	5,000	-	-	-
156	Զոդման աշխատանքներ 1 բաղ.սմ համար	-	500	-	-	-
	8. Ղեկային մեխանիզմ					
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	18,900
158	Նույնը V6-ի համար	-	-	-	-	-
159	Ղեկային կալունի վերանորոգում	40,000	40,000	40,000	40,000	105,000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	3,500	3,500	3,500	3,500	3,500
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	6,000	-	-	-	-
163	Նույնը DOHC դեպքում	100	-	-	-	-
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3,000	-	-	-	-
165	Նույնը DOHC դեպքում	100	-	-	-	-
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	4,500	-	-	-	-
167	Նույնը DOHC դեպքում	100	-	-	-	-
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	100	-	-	-	-
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	2,500	-	-	-	-
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	15,500	-	-	-	-
	9. Արգելակային համակարգ					
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
172	Գլխ. գլանի վերանորոգում	100	100	100	100	9,000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	6,500	6,500	6,500	6,500	6,500
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
175	Բանվ. գլանի վերանորոգում	2,000	2,000	2,000	2,000	2,000
176	Արգելակային համակարգի օդահանում	2,000	2,000	2,000	2,000	2,000
177	Աջևի սուպպորտի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	-	-	-	-	-
179	Աջևի սուպպորտի վերանորոգում	2,000	2,000	2,000	2,000	10,000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	-	-	-	-	-
181	Արգելակային փողրակի փոխարինում	3,500	3,500	3,500	3,500	4,000
182	Աջևի արգելակային կոնդակների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000